

Վարդան Մխիթարյան

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԻՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Բանալի բառեր. պատմական աղբյուր, հին (պատմական) քարտեզ, պատմական աշխարհագրություն, պատմական քարտեզագրություն, համակարգչային քարտեզագրում, աշխարհագրական տեղեկատվական համակարգ, քարտեզագրական հետազոտման մեթոդ:

Գիտությունների ինտեգրման և միջդիսցիպլինար հետազոտությունների իրականացման պայմաններում հին քարտեզների՝ անցյալի քարտեզագրական նյութի, որպես պատմական սկզբնաղբյուրի, ուսումնասիրությունն այսօր շատ արդիական է: Այն լինելով ամենահեռանկարային ուղղություններից մեկը՝ արագորեն զարգանում է¹:

Ժամանակի ընթացքում մեծ թվով հին քարտեզներ են ներառվել տարաբնույթ աշխատություններում. հանրագիտարանային և կոթողային հրատարակություններում, տեղեկատուներում, քարտեզների պատմությանը և աշխարհագրական հայտնագործություններին նվիրված աշխատություններում ու պատմական ուսումնասիրություններում՝ ամբողջականացնելով վերոհիշյալ երկերը:

Հին քարտեզները, որևէ նյութի բաղկացուցիչ մաս լինելուց զատ, հանրությանը ներկայանում են նաև առանձին քարտեզի, քարտեզագրական ստեղծագործության, ընդհանուր կամ թեմատիկ բովանդակության քարտեզների շարքի և ատլասների ձևով: Ժամանակի ընթացքում մեծ թվով հին քարտեզներ են ներառվել տարաբնույթ աշխատություններում. հանրագիտարանային և կոթողային հրատարակություններում, տեղեկատուներում, քարտեզների պատմությանը և աշխարհագրական հայտնագործություններին նվիրված աշխատություններում ու պատմական ուսումնասիրություններում՝ ամբողջացնելով վերոհիշյալ երկերը: Հին քարտեզները, որևէ նյութի բաղկացուցիչ մաս լինելուց զատ, հանրությանը ներկայանում են նաև առանձին քարտեզի, քարտեզագ-

¹ St' u Гедымин А.В., Значение картографических источников прошлого для изучения ландшафтов // Вестник МГУ, сер. 5, География, 1961, № 4, с. 36-41, Медушевская О.М., Картографические источники XVII-XVIII вв.: Учеб. пособие по источниковедению истории СССР, отв. ред. Яцунский В.К., М., 1957, его же: Теоретические проблемы источниковедения, М., 1977, Белов М.И., Арктическое мореплавание с древнейших времен до середины XIX в., М., 1956 (бл. карт.), его же: Ошибка или умысел? Карты Пири Рейса и их американские истолкователи // "Природа", 1960, № 11, с. 89-95, его же: Против ложного толкования карт Пири Рейса // "Природа", 1962, № 2, с. 84-88, Андреев А.И., Очерки по источниковедению Сибири, М., Л., вып. 1, XVII век, 1960, вып. 2, XVIII век (первая половина), 1965, Гольденберг Л.А., Русские картографические материалы как исторический источник и их классификация (по фондам центральных государственных исторических архивов СССР): Автореф. дис. ... канд. ист. наук, Л., 1958, его же: Картографические материалы как исторический источник и их классификация (XVII-XVIII вв.) // Проблемы источниковедения, 1959, т. 7, с. 296-347, его же: Развитие отечественной исторической картографии // "Вопросы истории", 1974, № 7, с. 33-48, его же: Использование старых карт в географических и исторических исследованиях, М., 1980, с. 3-15, Люблинская А.Д., Источники в смежных с историей науках: (по материалам зарубежной медиэвистики) // Проблемы источниковедения западноевропейского средневековья, Л., 1979, с. 9-46, Критский Ю.М., Русская историческая картография (XVIII-начало XX вв.) // Вспомогательные исторические дисциплины, Л., 1978, Т. X, с. 104-127; Koeman C., Collection of Maps and Atlas in the Netherland: their History and Present Stage, Leiden, Brill, 1961, An Increase in Facsimile Reprints // "Imago mundi", 1964, vol. 18, p. 87-88, Moderne onderzoekingen op het gebied van de historische Kartografie // "Bul. Vakgroep Kartogr.", 1975, № 2, p. 3-24, Skelton R.A., Decorative Printed Maps of the 15th to 18th Centuries // A rev. Ed of old Decorative Maps and Charts by A.L. Humphreys, L., 1965, t. VIII, p. 80, 84, Saxton's Survey of England and Wales: With a facs. of Saxton's Wall-Map of 1583, Amsterdam: N. Israel, 1974, 20 m. // "Imago mundi", Suppl.: № 6, Harvey P.D.A., A 13th Century Plan from Waltham Abbey, Essex. // "Imago mundi", 1968, vol. 22, p. 10-12, The History of Topographical Maps: Symbols, Pictures and Surveys, L., First edition (June 16, 1980).

րական ստեղծագործության, ընդհանուր կամ թեմատիկ բովանդակության քարտեզների շարքի և ատլասների ձևով:

Մեր օրերում, շատ է կարևորվում հին քարտեզի նշանակությունը, որպես քարտեզագրության պատմության կոթող, որը մեզ հնարավորություն է ընձեռում տեղեկատվություն ստանալ ոչ միայն տեղանունների և աշխարհագրական տարրերի տեղադրության մասին, այլև, պատկերացում կազմել տվյալ ժամանակահատվածում քարտեզագիտության ոլորտում շրջանառվող մոտեցումների, և, բնականաբար, դրանց կազման ժամանակ կիրառված տեխնիկական միջոցների զարգացածության աստիճանի վերաբերյալ¹: Այդ արժեքավոր սկզբնաղբյուրները վաղուց արդեն իրենց կիրառությունն են գտել պատմաաշխարհագրական միջոցիցսիստեմային հետազոտություններում, որոնց խորը, բազմակողմանի և համալիր վերլուծությունը երաշխավորում է պատմական ուսումնասիրության անաչառությունն ու հավաստիությունը:

Քարտեզագրությունը որպես գիտություն վերջին տասնամյակներում զարգացել է շատ արագ տեմպերով, որի վառ վկայությունն է այդ համատեքստում երեք հիմնական գիտակարգերի ձևավորման իրողությունը՝ մոդելա-ձանաչողական², հաղորդակցական³ և լեզվական⁴: Նկատվում է ստեղծվող գիտակարգերի միավորում, որին անվանում են «աշխարհատեղեկատվական»⁵:

Քարտեզագրության տեսության մեջ նոր գիտակարգի ձևավորումը ունի խոր արմատներ, որի հենքում ընկած են մաթեմատիկա-քարտեզագրական մոդելավորումը և քարտեզագրական հետազոտման մեթոդը⁶:

Նոր գիտակարգը և ավանդական քարտեզագրությունից փոխառություն արված հետազոտման մեթոդները կարող են լիովին կիրառվել պատմական ուսումնասիրություններում, սկզբունքորեն փոխելով քարտեզագրական նյութի հետ աշխատելու մոտեցումները, ապահովելով այդ արժեքավոր սկզբնաղբյուրների ամբողջական ու բազմակողմանի ուսումնասիրությունը:

Մեր օրերում հին քարտեզների ուսումնասիրության ոլորտում կիրառվում են հետազոտման չորս փոխկապակցված ուղղություններ, որոնց համակցված օգտագործումը ապահովում է առավել ամբողջական արդյունքներ: Դրանք են.

1. գրադարանների, արխիվների, մասնավոր հավաքածուների, քարտեզագրական ֆոնդերի բացահայտում և նկարագրում⁷,
2. հին քարտեզների պատմաաղբյուրագիտական վերլուծություն⁸,

¹ Постников А.В., Развитие картографии и вопросы использования старых карт, М., 1985, с. 12-13.

² Շեշտը դրվել է քարտեզագրական մոդելավորման միջոցով իրականության ճանաչման վրա, դիտելով քարտեզը որպես իրականության արտահայտման պատկերա-նշանային մոդել: Հենց այս գիտակարգի շրջանակներում են ձևավորվում քարտեզագրական մեթոդի միջոցով իրականության ճանաչման մասին պատկերացումները: Տե՛ս Лютый А.А., Язык карты: сущность, система, функции, М., 1988, с. 254.

³ Քարտեզի լիարժեք պատմական աղբյուր լինելը շատ լավ ձևով դրսևորվում է դրա հաղորդակցական գիտակարգում, որը մեկնաբանում է քարտեզը որպես «տեղեկատվության աղբյուր, հաղորդակցության միջոց քարտեզ կազմողի և այն օգտագործողի միջև»: Տե՛ս Берлянт А.М., Геоиконика, М., 1996, с. 27.

⁴ Գիտակարգը շեշտը դնում է քարտեզի լեզվի վրա, միևնույն ժամանակ քարտեզը, դիտվում է որպես տեքստ, որը գրված է այդ լեզվով: Այդ լեզվի տեսական հարցերով է զբաղվում քարտեզագրության ենթաճյուղերից «կարտոնոմիա»-ն: Տե՛ս Лютый А.А., указ. соч., с. 275.

⁵ Տե՛ս Берлянт А.М., указ. соч., с. 25-26.

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 32-33:

⁷ Պատմական քարտեզներ ուսումնասիրողների առջև ծառայած ամենաառաջնային խնդիրներից մեկը դա քարտեզագրական նյութի հայտնաբերումն ու նկարագրումն է՝ նշելով նաև դրանց գտնվելու վայրը: Տե՛ս Постников А.В., указ. соч., с. 14.

⁸ Հին քարտեզների պատմաաղբյուրագիտական վերլուծությունը գործնականում ոչնչով չի տարբերվում այլ պատմական աղբյուրների բովանդակության գնահատման և քննադատման ձևերից: Այնուամենայնիվ, այդ խնդիրների լուծման համար օգտագործվող ձևերը և մեթոդները պայմանավորված են քարտեզագրական նյութի յուրահատկությունից՝ կազմման ժամանակաշրջանից, բովանդակության և արտահայտման ձևից և այն պետք է դիտարկել առաջադրված խնդիրների լուծման տեսանկյունից:

Տե՛ս Постников А.В., указ. соч., с. 15, Гольденберг Л.А., Деопик Д.В., Постников А.В., Методы использования карт в исторических исследованиях // Материалы VIII Междунар. Картогр. Конф., М., 1976, с. 16.

3. անցյալի քարտեզագրական նյութի համեմատական ուսումնասիրություն¹,

4. հին քարտեզների վերլուծություն²:

Մեր կողմից քննության առնվող նյութի համար առավել հետաքրքրություն է ներկայացնում պատմաաշխարհագրական հետազոտություններում կիրառվող չորրորդ ուղղությունը՝ հին քարտեզների վերլուծությունը, ժամանակակից մաթեմատիկական (համակարգչային) մեթոդով:

Ժամանակակից պատմագիտության առանձնահատկություններից մեկն այն է, որ հետազոտություններում քննարկվում է պատմական գործընթացների ոչ միայն ժամանակային, այլև տարածական բաղադրիչը: Երկրի վրա ամեն մի գործընթաց տեղի է ունենում որևէ վայրում, որոշակի տարածության մեջ: Հետևաբար, հետազոտություններում եթե չուսումնասիրվի պատմական գործընթացի աշխարհագրական կողմը, ապա, ուսումնասիրությունը կարող է ստացվել միակողմանի և ոչ լիարժեք:

Պատմական հետազոտություններում ոչ միայն կարող են օգտագործվել աշխարհագրության՝ սոցիալ-տնտեսական ու դեմոգրաֆիական դիտարկումների տարածական վերլուծության արդյունքները, այլև, այդ տվյալների բազայի մշակման համար օգտագործվող ոչ ավանդական ուսումնասիրման մեթոդները և տեխնիկան: Այս դեպքում խոսքը վերաբերում է համակարգչային քարտեզագրմանը՝ աշխարհագրական տեղեկատվական (գեոինֆորմացիոն-GIS) համակարգերի (ԱՏՀ) միջոցով: Պատմական հետազոտություններում նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը բարդ, ստեղծագործական և նորարարական աշխատանք է, և բնական է, որ սկզբնական շրջանում խնդիրների լուծման ժամանակ կառաջանան մի շարք դժվարություններ: Հետազոտողները համապատասխան խորը գիտելիքների և հմտությունների տիրապետելուց զատ անհրաժեշտ է, որ քաջատեղյակ լինեն քննվող նյութին, ուսումնասիրեն պատմաաղբյուրագիտական գրականությունը, ծանոթանան արծարծված հարցերին առնչվող աշխատություններին, փորձեն գտնել հարցերի այնպիսի շրջանակ, որոնց վերլուծությունը կապահովի բավարար արդյունք: Եվ եթե մինչ այժմ քարտեզը համարվում էր պատկերավոր ձևով տեղեկատվության ցուցադրման միջոց, ապա համակարգչային քարտեզագրումը հետազոտողների առջև բացում է տեղեկատվության մշակման սկզբունքորեն նոր և շատ հեռանկարային դաշտ՝ պատմա-տարածական վերլուծության առումով: Հետևաբար, տեղի է ունենում անցում քարտեզ պատկերից վերլուծական քարտեզի³:

Վերոբերյալից է կարելի է հանգել այն հետևության, որ համակարգչային քարտեզագրության կիրառմամբ և քարտեզագրական սկզբնաղբյուրների օգտագործմամբ պատմական գիտելիքների ձեռքբերման գործընթացին հաղորդվում է նոր շունչ: Հնարավորություն է ընձեռվում, օգտագործելով աշխարհագրական տարածական հենքը և ստեղծված պատմական տվյալների բազան, գործադրելով համակարգչային քարտեզին բնորոշ արտահայտչամիջոցները, ստանալ պատմական տվյալների տարածական ցուցադրման տարաբնույթ վերլուծություններ, ստեղծել քարտեզի ցուցադրման համար շարժուն հիմքեր:

Պատմական քարտեզագրությունը, որպես ժամանակակից պատմական աշխարհագրության ուղղություններից մեկը, հենվում է համակարգչային ծրագրային հնարավորությունների վրա, իր հետագա զարգացման համար ձեռք է բերում նոր հեռա-

¹ Հին քարտեզագրական նյութի համեմատական ուսումնասիրություն ասելով պետք է հասկանալ տարբեր քարտեզներում միանման տարրերի (էլեմենտների) համեմատում՝ ցուցադրելով ժամանակի ընթացքում այդ նույն տարրերի փոփոխության դինամիկան: Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենանք, որ ուսումնասիրություններում միայն հետազոտության այս ուղղության կիրառումով հնարավոր չէ ունենալ հավաստի արդյունքներ: Այդ իսկ պատճառով ցանկալի է, որ համեմատական ուսումնասիրության մեթոդը գործադրելիս փորձ արվի զուգորդել մյուս քարտեզագրական վերլուծության ձևերի հետ: Տե՛ս Harley J.B., The Evaluation of Early Maps: Towards a Methodology // "Imago mundi", 1968, vol. 22, p. 65-66.

² Հին քարտեզների հետազոտություններ իրականացման ընթացքում օգտագործվում են բնական գիտություններում կիրառվող ժամանակակից մեթոդներ, մասնավորապես մաթեմատիկական (համակարգչային) և ֆիզիկոքիմիական: Տե՛ս Постников А.В., указ. соч., с. 13.

³ Տե՛ս Тикунов В.С., Цяпук Д.А., Устойчивое развитие территорий: картографо-геоинформационное обеспечение, М., Смоленск, 1999, с. 14-32.

նկարներ, ինչը և պատմական հետազոտություններում քարտեզագրությանը բերում է սկզբունքորեն նոր դաշտ, հնարավորություն տալով իրականացնել անցյալի տարածական մոդելավորում:

Ընդհանուր առմամբ, հետազոտություններում պահպանվում են պատմական քարտեզագրությունում կիրառվող ավանդական ուսումնասիրության ուղղությունները, հիմնականում առաջնորդվելով պատմական հետազոտություններում քարտեզագրական մեթոդը չափորոշիչներով: Այս առումով տեղին է հնչում «...պատմական հետազոտություններում աղբյուրների հետ աշխատելու ժամանակ ավանդական և նոր մոտեցումների համադրումը համարվում է ամենահուսալի միջոցը դեպի պատմական ճշմարտություն» արտահայտությունը¹:

Քննարկվող նոր գիտակարգը համադրումն է ամենաքիչը չորս գիտության՝ պատմագիտության, աշխարհագրության, քարտեզագրության և ինֆորմատիկայի, ուր պատմագիտության և աշխարհագրության համար կապող օղակ են այնպիսի գիտակարգերը, ինչպիսիք են պատմական աշխարհագրությունն ու պատմական քարտեզագրությունը: Իսկ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ աշխարհագրության կողմից օգտագործվող աշխարհագրական տեղեկատվական համակարգերը հենվում են քարտեզագրության և ինֆորմատիկայի մի շարք մեթոդների և ալգորիթմների վրա, ապա պարզ կդառնա, որ խոսքը շատ բարդ միջոցառումն է սինթեզի մասին է²:

Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի համատարած օգտագործումը գիտության տարբեր բնագավառներում սկսվել է համեմատաբար ոչ վաղ անցյալում: Գոյություն ունեն այդ համակարգերի վերաբերյալ մի շարք մեկնաբանություններ, ընդհանուր առմամբ դրա ներքո պետք է հասկանալ ավտոմատացված տեղեկատվական համակարգեր, որոնք նախատեսված են տարածական (աշխարհագրական) տվյալների և դրանց հետ կապված անհրաժեշտ օբյեկտների վերաբերյալ տեղեկատվության հավաքման, պահպանման, վերլուծության և վերջիններիս գրաֆիկական արտացոլման համար³:

Համակարգչային քարտեզագրումը մեծապես ընդլայնում է ոչ միայն ընդհանուր առմամբ պատմության, այլև պատմական աշխարհագրության և պատմական քարտեզագրության ոլորտում կիրառվող գործիքակազմը և որպես մեթոդ անխուսափելիորեն համարվում է այդ գիտակարգերի անբաժան մասը:

Հայրենական պատմագիտության մեջ, քարտեզագրական նյութերի օգտագործմամբ, իհարկե, կատարվել են մի շարք հետազոտություններ, և հանուն ճշմարտության պետք է փաստենք, որ նմանատիպ աշխատանքների իրականացումն իրենից ներկայացնում է բավականին բարդ, գիտատար ու աշխատատար գործընթաց՝ ինչպես քարտեզի կազմումը, այնպես էլ դրա միջոցով երևույթների ուսումնասիրությունը:

Այժմ կարելի է խոսել նմանատիպ աշխատանքների կատարման որակական նոր փուլի մասին, որը պայմանավորված է պատմական ուսումնասիրություններում համակարգչի և դրան ուղեկցող տեխնոլոգիաների ներգրավմամբ: Այս թեմայով (պատմական համակարգչային քարտեզագրումը որպես պատմական հետազոտության միջոց) դեռևս չկան տեսական մշակումներ՝ գրականություն, սակայն, այս գիտակարգի զարգացման և կիրառման միտումները խոսում են այն փաստի մասին, որ նման մշակումների այդ օրը հեռու չէ: Մեզանում վերոհիշյալ ուղղությամբ դեռևս ոչինչ արված չէ, բացառությամբ մի շարք հետազոտությունների, որոնք իրականացվել են մեր կողմից, և հետևաբար, այդ հարցի շուրջ ընդհանուր մեկնաբանություններ անել չենք կարող:

¹ St`u «Источниковедение новейшей истории России: теория, методология и практика», под общей ред. Соколова А.К., М., 2004, с. 60.

² St`u «Междисциплинарный синтез в истории и социальные теории: теория, историография и практика конкретных исследований», под ред. Б.Г. Могильниченко, И.Ю. Николаевой, Л.П. Репиной, М., 2004, с. 4.

³ St`u Լվետков В.Я., Геоинформационные системы и технологии, М., 1998, с. 8
// https://ru.wikipedia.org/wiki/Геоинформационная_система (հասանելի էր 16.09.2018 թ.)

Ժամանակի թելադրանքով պայմանավորված պատմագիտական հետազոտություններում անհրաժեշտություն է առաջանում կիրառել նորագույն մեթոդներ և տեխնոլոգիաներ, որոնք էապես կբարձրացնեն կատարված ուսումնասիրությունների որակը՝ անաչառությունն ու հավաստիությունը:

Կարծում ենք՝ վաղուց եկել է ժամանակը, որ մեր կրթական համակարգում դասավանդվեն քարտեզագրական հետազոտման ժամանակակից մեթոդները և տեխնոլոգիաները, որը գիտելիքների ձեռքբերման գործընթացին կհաղորդի նոր շունչ և որակ, կբարձրացնեն ոլորտի մրցունակությունը:

Այս կապակցությամբ ցանկանում ենք նշել, որ երկար տարիներ շատ երկրների կրթական հաստատությունների ուսումնական ծրագրերում ներառված է վերոհիշյալ գիտակարգի դասավանդումը: Ջորջիանակ, 2000-ականների սկզբներից ի վեր Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետի կազմում գործում է պատմական ինֆորմատիկայի ամբիոնը, իսկ որպես առանձին առարկա ընդգրկված է Միջազգային հարաբերությունների Մոսկվայի պետական ինստիտուտում ստեղծված ուսումնական-իրավիչակային կենտրոնների համակարգում:

Вардан Мхитарян, *Современные методы изучения старых карт в исторических исследованиях.* Изучение картографического материала прошлого, как исторического источника в историко-географических междисциплинарных исследованиях сегодня очень актуально. Современные исторические исследования требуют использования новейших методов и технологий - географических информационных систем (ГИС), которые существенно повысят качество исследований. Безусловно, ранее были проведены различные исследования в области национальной историографии с использованием картографических материалов. Однако, до сих пор не затронуты вопросы решения задач с использованием новых методов и технологий в исторических исследованиях, за исключением некоторых проведенных нами. Мы считаем, что давно настало время для применения современных методов и технологий в исторических исследованиях, что придаст новое дыхание и качество при приобретении исторических знаний.

Ключевые слова: исторический источник, старая (историческая) карта, историческая география, историческая картография, компьютерная картография, геоинформационная система, картографический метод исследования.

Vardan Mkhitaryan, *Modern Methods of Studying Old Maps in Historical Researches.* The study of the cartographic material of the past as a historical source in historical-geographical interdisciplinary researches is very relevant today. Historical research requires the use of newest methods and technologies – geographical information systems (GIS) that will essentially increase the quality of the survey. Of course, some researches have been carried out in the field of national historiography with the use of cartographic materials. However, there have not yet touched upon the use of new methods and technologies in historical researches, except for some researches carried out by us. We think that time has come for the modern research methods and technologies to be used in historical studies, which will give a new breath and quality to the acquisition of historical knowledge.

Key words: historical source, ancient (historical) map, historical geography, historical cartography, computer mapping, Geographic Information System, Method of cartographic research.